600.0321.16.09.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2020 թվականի №321Ա
քաղ. Երևան

«ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1 հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն որոշումը և հաշվի առնելով «Անվտանգության հատուկ ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի սեպտեմբերի 7-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «Անվտանգության հատուկ ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության հայտը և Երևան քաղաքում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրել 150.325ՄՀց և 155.325ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն՝ մինչև 2030 թվականի սեպտեմբերի 17-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «Անվտանգության հատուկ ծառայություն» փակ բաժնետիրական ընկերությանը Երևան քաղաքում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրվող 150.325ՄՀց և 155.325ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. «Անվտանգության հատուկ ծառայություն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում №900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի սեպտեմբերի 17-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
16 սեպտեմբերի 2020թ.